ԵՂԵԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Եղիշե Չարենց
Դասարան ՝ 7-րդ
Աշակերտ՝ Միլանա Կոստանդյան
Ուսուցիչ՝ Նաթելլա Սահակյան

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



1897 մարտի 13-ին Կարսում, զորգավաճառ Աբգար Սողոմոնյան-Մարգարյանցի (Աբգար աղա) ընտանիքում ծնվում է ապագա բանաստեղծ Եղիշե Սողոմոնյանը: Հայրը՝ Աբգար Մարգարի Սողոմոնյան, մայրը՝ Թեկղե Ավետիքի Միրզայան: Ծնողները ծագումով Մակուից էին, այդ իսկ պատճառով նա ևս երբեմն իրեն մակվեցի է համարել «Հայրենիքս է Խանի Մակուն»,«Բանաստեղծ ծնված Մակու քաղաքում»: Հայրը պարսկահպատակ էր և զբաղվում էր զորգի առևտրով: Եղիշեից բացի ուներ ևս վեց երեխա Աշխեն, Մարիամ, Աննա, Գեղամ, Սերոբ, Սողոմոն:

Չարենց գրական անվան ծագման պատմությունը

Եղիշե Չարենցը Գուրգեն Մահարուն պատմել է, թե Կարս էր եկել Չարենց ազգանունով մի բժիշկ, որի ցուցատախտակի «Չարենց» մակագրությունն էլ վերցրել է: Պատանեկան տարիների մտերիմները այլ բացատրություններ էլ են տալիս: Ըստ Կարինե Քոթանջյանի՝ բանաստեղծը Չարենց է մկրտվել, որովհետև մանկուց եղել է չար երեխա: Նրան այնքան են չար ասել, որ Չարենց էլ մնացել է: Իսկ Անուշավան Ձիդեջյանը (Վիվան) բանաստեղծի կողմից վկայել է, որ Չարենց անունն առաջացել է Ալեքսանդր Պուշկինի «Անչար» ոտանավորի հնչյունական տեղաշարժերի արդյունքում, անչարը ծառատեսակ է, որ աճում է անապատում, և որի արմատները թույն են արտադրում: 1921 թվականից «Չարենց» գրական անունը նրա համար դառնում է նաև քաղաքացիական ազգանուն: «Չարենց» անվան ընտրությանը բանաստեղծն ավելի ուշ տվել է տրամաբանական այսպիսի բացատրություն. «Աշխարհում բարու դիմակի տակ շատ հաճախ չարն է թաքնված, ես էլ իմ հոգու բարի բովանդակությանը, այսպես ասած, չար անուն եմ տվել»:

ՉԱՐԵՆԸ 1910-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1912_թվականին_Թիֆլիսի Պատանի» ալմանախում Եղիշե Սողոմոնյան ստորագրությամբ տպագրվում է «Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին» տողով սկսվող բանաստեղծությունը, իսկ 1914 թվականին արդեն «Եղիշե Չարենց» ստորագրությամբ լույս է տեսնում 17-ամյա պատանու «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքույկը՝ նվիրված Աստղիկ Ղոնդախչյանին. Այն ընդգրկում էր մեկը մյուսին շարունակող երեք բանաստեղծություն: 1916 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում «Դանթեական առասպել» պոեմը: Այդ օրերին էլ մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու Շանյավսկու համալսարանում, և մնում է այնտեղ մինչև 1917 թվականի գարունը: 1918-1920 թվականներին գրում է «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմները և «Ողջակիզվող կրակ» շարքը:

ԴԱՆԹԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Դանթեական առասպել պոեմը Եղիշե Չարենցը գրել է 1916 թվականին: պոեմն ունի կենսագրական հիմք. կամավորական ջոկատների կազմում պատերազմին մասնակցած 18-ամյա բանաստեղծի «անձնական» տպավորություններն են: Պոեմի վերնագիրը պատահականորեն չի ընտրված: Դանթեն 13-14-րդ դարերի իտալացի բանաստեղծ է: Նա իր «Աստվածային կատակերգություն» պոեմի առաջին մասում նկարագրել է դժոխքը, ուր մեղավոր հոգիները ենթարկվում են բազմազան ու աներևակայելի տանջանքների: Պոեմն սկսվում է երիտասարդ կամավորների տոնական տրամադրությամբ: Տոնական այս տրամադրությունը տևում է երեք օր: Պոեմի նախավերջին գլխում նկարագրվում է բուն կռիվը: Պոեմի վերջում հնչում է պարզ ու որոշակի պատասխանը. «Մենք՝ զոհ, մենք՝ դահիճ՝ ուրիշ ձեռքերում»: Հիասթափությունն ու հուսախաբությունը հասնում են գագաթնակետին: Դաժան իրականությունը ցրել է պատերազմի հետ կապված ամեն հույս ու հեռանկար, երիտասարդ կամավորների փրկարար առաքելության բոլոր պատրանքները: Աշխարհավեր արհավիրքի իսկական դեմքը տեսած բանաստեղծն ապրելու բնական տենչով վերստին ապավինում է վաղեմի երազին՝ անիմաստ կյանքի պարապը լցնելու համար: Պատերազմի ճանապարհներին պատանի բանաստեղծի տեսած ու ապրած իրական սարսափները նրան հիշեցրել են Դանթեի «Դժոխքում» նկարագրվածը: Առաջինը «ճամփի մոտ ընկած» մի դիակ է, որը «փտել է արդեն անձրևների տակ», հետո՝ «կրկին մի քանի դիակ» հրկիզված արտեր, այրված գյուղեր, մեռած քաղաք և այսպես շարունակ:

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արև՛ն էին գնում ամբոխները խելագարված…

ԾԻԱԾԱՆ

Կարինե Քոթանճյանին
Դու իմ վերջի՛ն,
իրիկնայի՛ն, աստղայի՛ն
քույր...

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը — թախիծ.
Կապույտը — կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:

Կապո՛ւյտի մեջ, կապո՛ւյտի մեջ — արևի ոսկին:
Նա ոսկի է, երկի՛նք նետած մի կտոր ոսկի.
Նա — մի երազ, ոսկի միրաժ արթնացած խոսքի:

Կապույտից հետո և ոսկուց հետո,
Քո՛ւյր, փռվեց ահա իմ տրտմած հոգում,
Որպես երազում ապրած երեկո —
Մի խամրած մշուշ մանուշակագույն:

ՉԱՐԵՆԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1919 թվականին Չարենցին *անհայտությունից* գրական ասպարեզ է բերում Նիկոլ Աղբալյանը: 1920-1921 թվականներին Չարենցը գրում է «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները: 1922-1924 թվականներին Չարենցի նոր որոնումների շրջանն է. ստեղծվում են «Պոեզոզուռնա», «Կոմալմանախ» ժողովածուները, «Ռոմանս անսեր» պոեմը, «Ասպետական» ռապսոդիան, «Կապկազ թամաշան»:

ՏԱՂԱՐԱՆ ՇԱՐՔ

Արփիկին
Հիդըս խոսի՛, մի՛ կենա խըռովի պես,
Տալղա տըվիր, գեմիս տարար ծովի պես.
Կու մեռնիմ,— չիս տեսնի Սայաթ-Նովի պես…

Սայաթ–Նովա

Ինչքան որ հուր կա իմ սրտում — բոլորը քեզ.
Ինչքա՛ն կրակ ու վառ խնդում — բոլորը քեզ.—
Բոլո՛ր տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի՛ հուր թող չմնա՝
Դո՛ ւ չմրսես ձմռան ցրտում.— բոլո՛ր քեզ…

Եղիշե Չարենցը իր «Տաղարան» շարքը ձոնել է սիրելի կնոջը՝ Արփենիկին: Արփենիկին Չարենցը սիրել է բարձրագույն սիրով: Բնավորությամբ նա եղել է մեղմ ու սրտակից ընկեր: Արփիկի մահը Չարենցը շատ ծանր է տարել: Ոմանք պատմում են, որ Արփիկի դագաղում ապակյա տարայի մեջ ամփոփված, Չարենցը բանաստեղծություններ է թաղել: Տաղարանում զետեղված է 20 բանաստեղծություն, որոնցից 18 սիրային են 2՝ հայրենասիրական:

Ես իմ անուշ Հայաստանի



Չարենցի **«Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում»** տաղի *«արևահամ բառի»* ակունքը Հովհաննու ավետարանն է, որն սկսվում է *«Ի սկզբանե էր Բանն, և բանն էր առ Աստված, և Աստված էր Բանն»*: Բան՝ այսինքն խոսք. Աստված խոսք է: Պետք է *«բառ»* լիներ, որպեսզի գեղարվեստական պատկերը ներքուստ զարգանալով հասներ ողբաձայն երգի, երկաթագիր գրքի, Նարեկացու ու Քուչակի:

ՏԵՐՅԱՆ ԵՎ ՉԱՐԵՆՑ

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո։
Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա։
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան Տերյան, քո անցած ուղին
Ու մշուշում տխո՛ւր երգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր…

«Երեքի» դեկլարացիա



Եղիշե Չարենց

Գևորգ Աբով

Ազատ Վշտունի

1921թ. հունիսի 14-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում լույս է տեսնում Չարեցի Ազատ Վշտունու և Գևորգ Աբովի ստորագրած «Երեքի» դեկլարացիան: Որպես նոր արվեստի պատգամախոսներ՝ նրանք պահանջում էին հայ գրականության արմատական բարեփոխում: Բոլոր ծայրահեղություններով հանդերձ՝ «Երեքը» խմբակցության գործունեությամբ Չարենցը Հայաստանում սկզբնավորց բուռն գրական շարժում: 1922 թվականի «Երեքի» դեկլարացիայից հետո Չարենցը փաստորեն դառնում է նորագույն շրջանի հայ գրականության առաջնորդը:

ՉԱՐԵՆԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1930 - Երևանում լույս է տեսնում «Էպիքական լուսաբաց»շ ժողովածուն:1934 թ. լույս է տեսնում «Գիրք ճանապարհի» ժողովածուն, որոնց տպագրումն ու տարածումը արգելվում է: 1935 թվականից սկսած՝ Չարենցի դեմ ուղղված հալածանքներն ավելի են խորանում: Նրան հեռացնում են հրատարակչությունից և գրողների միությունից: 1936 թվականի սեպտեմբերի 24-ից Չարենցը ենթարկվում է տնային կալանքի, նույնը վերջնականապես պարտադրվում է նոյեմբերի 9-ին: Չարենցի առողջական վիճակը գնալով վատանում էր, ինչի պատճառով հայտնվում է բանտի հիվանդանոցում: 1937 թվականի նոյեմբերի 27-ի առավոտյան՝ ժամը 7:00-ին, Կենտրոնական բանտի հիվանդանոցում, օրեր շարունակ տևած անգիտակից վիճակից հետո, բոլորից լքված ու անօգնական՝ իր մահկանացուն է կնքում Եղիշե Չարենցը՝ ժամանակի մեծագույն բանաստեղծը:

<<Չարենց. Մի ճրագ մթում>> փաստագրական ֆիլմ

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում գրված…